Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 12-ի N 1990 - Լ որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ

ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ

1. Սույն միջոցառման նպատակն է աջակցել աշխատաշուկայից (ֆորմալ զբաղվածությունից) դուրս մնացածներին կամ մասնակի ֆորմալ զբաղվածություն ունեցողներին, որոնք ունեն անհուսալի վարկային դասով դասակարգված վարկային պարտավորություն(ներ)՝ վերականգնելու իրենց տնտեսական ակտիվությունն աշխատաշուկա վերադառնալու միջոցով:

2. Սույն միջոցառման մեջ կիրառվող հասկացություններն ու հապավումներն ունեն հետևյալ իմաստները.

1) **անհուսալի վարկ՝** Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2021 թվականի հունիսի 16-ի N 2-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մարտի 30-ի N 39-Ն համատեղ որոշման 1-ին կետով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն անհուսալի դասով դասակարգված վարկային պարտավորություն, որն ունի առնվազն 3 տարվա չընդհատվող վաղեմություն (առնվազն 3 տարի վարկային ակտիվը դասակարգած է անհուսալի դասով).

2) **աշխատող՝** աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրի շրջանակներում աշխատանք կատարող (ծառայություններ մատուցող) ֆիզիկական անձ.

3) **շահառու՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող անձ, որը՝

ա. սույն միջոցառման շահառու ճանաչվելու համար սահմանված կարգով ներկայացրել է դիմում,

բ. 2025 թվականի փետրվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված առևտրային բանկ(եր)ում կամ վարկային կազմակերպություն(ներ)ում որպես վարկառու ունեցած որևէ վարկ անհուսալի է, որի (որոնց) հանրագումարը (միայն վարկ(երի)ի մայր գումար(ներ)ը) դիմելու օրվա դրությամբ չի գերազանցում 1,000,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթը),

գ. սույն միջոցառման շահառու դառնալու համար դիմում ներկայացնելու օրվա դրությամբ հանդիսանում է աշխատող՝ ըստ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում» առկա տեղեկատվության.

4) **վարկային բյուրո՝** «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերություն.

5) **վարկավորող՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված առևտրային բանկ կամ վարկային կազմակերպություն, որը տրամադրել է շահառուի վարկը.

6) **անձնավորված հաշվառման համակարգ՝** Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգ».

7) **ՀԾՀ՝** հանրային ծառայության համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար.

8) **ՀԿԱ ծառայություն՝** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն.

9) **ՄՍ ծառայություն՝** Հայաստանի Հանրապետության միասնական սոցիալական ծառայություն:

3. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից)

հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության մարմանը:

4. Աջակցությունը տրամադրվում է առավելագույնը 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելուն հաջորդող ամսվա 1-ից, բայց ոչ ավելի, քան անհուսալի վարկի ամբողջական մարումը, աջակցության՝ սույն որոշմամբ սահմանված հիմքով դադարեցվելը կամ պարտավորության օրենքով սահմանված հիմքով դադարելը:

5. Շահառու ճանաչվելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներկայացված հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից:

6. Սույն միջոցառման շրջանակում անձը կարող է ճանաչվել շահառու միայն մեկ անգամ և չի կարող կրկին դիմել միջոցառման շահառու դառնալու համար:

7. Շահառուի աջակցությունը դադարում է, եթե շահառու դառնալուց հետո 24 ամսվա ընթացքում, մինչև անհուսալի վարկի ամբողջական մարումը, 3 ամիս անընդմեջ դադարում է լինել (չի հանդիսանում) աշխատող: Տվյալ դեպքում վարկավորողը կարող է վերականգնել սույն ծրագրի շրջանակում ներված պարտավորությունները, եթե այդպիսիք եղել են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ